Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Ոսկեվանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Թեմա՝ «Ուսուցման ակտիվ մեթոդները որպես սովորողների ներգրավվածության բարձրացման միջոց »

Մենթոր՝ Նաիրա Անանյան

Ուսուցիչ՝ Լամարա Ալեքսանյան

2023թ.

Բովանդակություն

Ներածություն----------3.

1 Ուսուցման մեթոդների ընդհանուր բնութագիր----------4

2 Ուսուցման ակտիվ մեթոդները որպես սովորողների ներգրավածության բարձրացման միջոց ----------8

2. Դասի պլան---------- 15

4. Եզրակացություն 17

5 Գրականության ցանկ 18

Ներածություն

«Տվեք երեխային հետաքրքրասիրություն, գիտելիքը նա կգտնի ինքը»:

Անատոլի Գին

Աշխարհում հազարավոր մասնագիտություններ կան: Երբ խոսքը գնում է դրանց մեջ ամենակարևորների մասին, առաջին հերթին բոլորի մտապատկերում հայտնվում են բժիշկներն ու ուսուցիչները: Փաստ է այն միտքը, որ բժիշկներն ու ուսուցիչներն անգամ ուսուցիչ են ունեցել:

Կյանքի արագ գործընթացին զուգահեռ ամեն տարի, ամեն օր ուսուցման բնագավառում հայտնվում են նորարարություններ, որոնց ներմուծումը կրթական ոլորտ նպատակ է հետապնդում հեշտացնելու և ավելի արդյունավետ դարձնելու դասաժամը, մատչելի դարձնելու դասավանդելիք նյութը:

Ժամանակակից մանկավարժությունը ուսուցման և դասավանդման գործընթացը արդի կյանքի պահանջներին համապատասխանեցնելու, առավելագույնս անձնակենտրոն դարձնելու նպատակ ունի: Ուսումնական գործընթացի արդյունավետությունը մեծապես պայմանավորված է կիրառվող մեթոդներով:

Փորձը ցույց է տվել, որ ուսուցիչն ընդհանրապես և տարրական դասարանի ուսուցիչը մասնավորապես պետք է անընդհատ կատարելագործվի, քայլի ժամանակի հետ, նորացնի ու թարմացնի դասավանդման մեթոդներն ու միջոցները: Անելիքները բավական շատ են և բազմաբնույթ: Ուսուցիչը պետք է կարողանա հմտորեն իրագործել ծրագրային պահանջները՝ ապահովելով լեզվական կարողությունների և խոսքի զարգացման հարցը: Յուրաքանչյուր աշխատանքի կատարման հիմքում պետք է տեսնել խոսքի զարգացման, բառապաշարի հարստացման խնդիրը: Ուսուցման ակտիվ մեթոդը սովորողի և դասավանդողի փոխադարձ գործունեության ձև է, որտեղ դասավանդողը և սովորողը փոխազդում են միմյանց վրա կրթական գործունեության ընթացքում, և սովորողներն այստեղ ոչ թե պասիվ ունկնդիրներ են, այլ դասի ակտիվ մասնակիցներ:

Ուսուցման գործընթացում չափազանց կարևոր է աշխատանքի արդյունքը, սակայն առավել կարևոր է առողջ հոգեբանական մթնոլորտը:

Անհրաժեշտ է ,որ երեխաները ոչ միայն ակտիվ մասնակցեն դասին, այլև իրենց զգան վստահ ու հարմարավետ:

Հետազոտության նպատակը.

Ուսումնասիրել ակտիվ մեթոդներով իրականացված դասերի արդյունավետությունը:

Հետազոտական հարց.

Արդյո՞ք ակտիվ մեթոդները նպաստում են սովորողների ներգրավվածության բարձրացմանը:

Հետազոտության խնդիրները.

1. Իրականացնել դասեր ակտիվ մեթոդների կիրառմամբ
2. Ընտրել և տեղայնացնել կոնկրետ մեթոդներ մայրենի և մաթեմատիկա առարկաների դասաժամերի համար:
3. Գնահատել երեխայի հետաքրքրությունների շրջանակը , ինչպես նաև՝ ուսուցչի մանկավարժական վարպետությունը, ստեղծագործական մոտեցումները ուսուցման մեթոդների կիրառման ժամանակ:

Ուսուցման մեթոդների ընդհանուր բնութագիրը

«Կրթությունն ամենահզոր զենքն է, որը դու կարող ես օգագործել աշխարհը փոխելու համար»:

Նելսոն Մանդելա

Մեթոդ-ը հունարեն բառ է, որ նշանակում է ինչ-որ տեղ տանող ուղի, ճանապարհ: Ուսուցման մեթոդների վերջնական և ամբողջական բնութագրում դեռևս չկա: Մեթոդների ընտրությունը և կիրառությունն ինքնանպատակ լինել չի կարող: Այն կապված է բազմաթիվ խնդիրների և նպատակների հետ, որոնք իրական լուծում կարող են ստանալ միայն հատուկ պլանավորված և կազմակերպված ուսումնական գործընթացի միջոցով:

Կրթության և դաստիարակության խնդիրները բոլոր ժամանակներում էլ հուզել է մարդկությանը: Ժամանակներն իրենց հետ բերում են նոր պահանջներ, որն էլ բերում է բարեփոխումների անհրաժեշտություն: Ուսումնառությունն արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ է գործածել զանազան մեթոդներ: Մեթոդների ընտրության հարցում պետք է լինել շատ զգույշ, որովհետև մեթոդների ընտրության վրա ազդող գործոնները բազմաթիվ են: Դա կախված է սովորողների տարիքային առանձնահատկությունից, բովանդակությունից և առկա ռեսուսներից:

Ուսումնառության ընթացքում մեթոդների կիրառումը չպետք է բեռ, ավելորդ ծանրաբեռնվածություն դառնա, այլ դյուրին դարձնի դասանյութը, իսկ գործընթացը՝ հետաքրքիր և գրավիչ,այն պետք է բարձրացնի սովորողների մասնակցությունը ուսումնառության գործընթացին:

Ուսուցման մեթոդները թույլ են տալիս ուսումնառության գործընթացը երեխայի համար հաճելի, իսկ ուսուցչի համար՝ արդյունավետ և ոգեշնչող դարձնելու հնարավորություն:

Արդյունավետ մեթոդների կիրառության ընթացքում դասապրոցեսին մասնակցում են բոլորը: Հաճախ ենք հանդիպում այն մտքին, թե ուսուցումը պետք է ունենա ստեղծագործական ուղղվածություն, որը կազմում է այն միջոցների, հնարների, մեթոդների հիմքը, որոնց կիրառմամբ պայմանավորված են ուսումնական գործընթացի բոլոր գործառույթները:

Մանկավարժության տեսության մեջ ընդունված են ուսուցման գործընթացի իրականացման մեթոդների բազմաթիվ տեսակներ, մանավանդ, մեթոդ եզրույթի տարբեր բնորոշումներ: Օրինակ, ըստ Ի. Լերների՝ ուսուցման մեթոդը ուսուցչի, աշակերտի իմացական և պրակտիկ գործունեությունը կազմակերպող հաջորդական գործողությունների համակարգ է, որը հանգեցնում է կրթության բովանդակության յուրացմանը, ասել է թե՝ ուսուցման նպատակների իրականացմանը:

Ըստ Մ. Դանիլովի և Բ. Եսիպովի բնորոշման՝ ուսուցման մեթոդը ուսուցչի և նրա օգնությամբ՝ աշակերտների աշխատանքի իրականացման եղանակներն են, որոնց շնորհիվ վերջիններս ձեռք են բերում գիտելիքներ, կարողություններ, հմտություններ, ձևավորում իրենց աշխարհայացքն ու զարգացման ճանաչողական ուժերը:

Ըստ Յու.Կ. Բաբանսկու ուսուցման մեթոդները պետք համապատասխանեն

- Ուսուցման սկզբունքներին
- Ուսուցման նպատակներին
- Տվյալ թեմայի բովանդակությանը
- Խմբի առանձնահատկություններին
- Ուսուցչի հնարավորություններին

Այսպիսով, ուսուցման մեթոդը դրված նպատակին հասնելու ճանապարհն է: Ուսուցման մեթոդները կազմված են եղանակներից՝ առանձին միանգամյա գործողություններից: Մեթոդի մեջ հստակ կերպով առանձնանում են օբյեկտիվ և սուբյեկտիվ մասերը: Այնտեղ, որտեղ մանկավարժը մեթոդի մեջ ներդնում է կոնկրետ փոփոխություններ, արտահայտվում է նրա ստեղծագործությունը:

Ուսուցման մեթոդների դասակարգմամբ զբաղվել են նաև մանկավարժ գիտնականներ Ա.Ն. Ալեքսյուկը և Ի.Դ. Զվերևը, Վ.Ֆ.Պալամարչուկը և Վ.Ի. Պալամարչուկը, Ս.Գ.Շապավալենկոն և ուրիշներ:

Ըստ ամերիկացի փիլիսոփա Ջոն Դյուիի՝ կրթության գործընթացի կազմակերպման համար ելակետ պետք է լինի երեխայի հետաքրքրություններն ու փորձը: Կրթության գործընթացում կենտրոնական դեմքը երեխան է, սովորողը: Նա արեգակ է, որի շուրջը պտտվում է ողջ կրթական գործընթացը: Երեխայի ուժերը պետք է հայտնաբերվեն, հետաքրքրությունները՝ բավարարվեն, ընդունակությունները՝ մարզվեն:

Ուսուցումը չպետք է լինի տեղեկատվության պարզ փոխանցում, այլ պետք է ընդգծի սովորողի ակտիվ մասնակցությունը ուսուցման գործընթացին: Այս դեպքում սովորողին հնարավորություն է ընձեռնվում տեղեկատվությունը և գաղափարները քննության ենթարկել, վերլուծել, ձևափոխել, խորհել դրանց նշանակության մասին:

Ուսուցման արդյունավետությունը մեծապես կախված է դասի արդյունավետությունից: Առանց լավ մտածված մեթոդների դժվար է ապահովել ծրագրային նյութի իմացությունը: Դրա համար էլ անհրաժեշտ է օգտագործել այնպիսի միջոցներ և մեթոդներ, որոնք կօգնեն ներգրավել աշակերտին սովորելու գործընթացին, կօգնեն նրան ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ, կզարգացնեն մտածողությունը և երևակայությունը: Ժամանակակից մանկավարժագիտության մեջ մեթոդների դասակարգման հիմքում ընկած են տարբեր մոտեցումներ. դրանք երբեմն դասակարգվում են ըստ ճանաչողության աղբյուրների, առանձին դեպքերում դասակարգումը

կատարվում է ըստ գիտելիքներ ձեռք բերելու միջոցների, ուսուցչի և սովորողի գործունեության բնույթի: Հաճախ հանդիպում են բացատրական-ցուցադրական, վերարտադրողական, մասնակի որոնողական և հետազոտական համարվող տարբերակումները: ԽԻԿ համակարգի պարագայում ընդունվում է ըստ դասի կառուցվածքային փուլերի դասակարգումը:[1] Ուսուցման մեթոդներն այսօր կարելի բաժանել 3 տեսակի՝

1. Պասիվ, երբ հիմնական գործող դեմքը ուսուցիչն է, աշակերտը հանդես է գալիս պասիվ լսողի դերում: Ավանդական դասարանը հենվում է այն ենթադրության վրա, որ ուսուցումը միայն ինտելեկտուալ գործընթաց է:
2. Ակտիվ, աշակերտ – ուսուցիչ փոխգործակցությունն է, երբ ուսումնառության ժամանակ սովորողները հանդես են գալիս ոչ միայն պասիվ լսողի դերում, այլև ուսուցիչ - աշակերտ փոխազդեցությունը հավասար մակարդակի վրա է գտնվում Վիգոտսկու, Պիաժիեի և մյուսների կարծիքով միմյանց հետ միմյանցից սովորելն էլ ավելի մեծ հնարավորություն է ընձեռում ակադեմիական գիտելիքները ընդլայնելու և խորացնելու համար՝ որքան ավելի շատ են խոսում, այնքան ավելի լավ են սովորում:
3. Ինտերակտիվ- շատ հեղինակներ նույնացնում են ակտիվ մեթոդների հետ, բայց այն ավելի շատ կարելի է դիտել ակտիվ մեթոդների ժամանակակից արտահայտման ձև: Շատ ժամանակ անվանում են փոխներգործուն մեթոդ, որը և ապահովում է սովորողների ներգրավվածություն:

Եթե պասիվ մեթոդների ժամանակ օգտագործվում են բացատրական ու զննական մեթոդները, և պատրաստի տեղեկույթը փոխանցվում է սովորողներին վերջիններիս կողմից պարզ վերարտադրմամբ և գիտելիքի ձեռքբերմամբ, ապա ակտիվ մեթոդների/խճանկար, դերային քարտերի բնութագրիչներ և պատմական լոտո խաղի /ժամանակ գոյություն ունեն մի շարք առանձնահատկություններ:

Աշակերտը նյութը սովորում է ինչ–որ բան կատարելով, մասնակցելով որոշակի գործընթացի, ապավինում է ոչ այնքան հիշողությանը, որքան ինքնուրույն ստեղծագործական, քննադատական մտածողությանը,

[1] Սարուխանյան Ս., Դալլաքյան Ա., Դիշաղաջյան Ն., Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, Վանաձոր 2008 թ, էջ 6-7;

հնարավորություն է ստանում աշխատելու ոչ միայն անհատական, այլև խմբային աշխատանքներում, ձեռք է բերում համագործակցային, սոցիալական փոխազդեցության, հաղորդակցման կարողություններ, հնարավորություն է ստանում համակարգել, ամփոփել և կիրառել սովորածը:

Ուսուցման ակտիվ մեթոդները որպես սովորողների ներգրավածության բարձրացման միջոց

Ակտիվ ուսուցումը ենթադրում է այնպիսի մեթոդների համակարգի կիրառում, որը ոչ թե նախատեսում է ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքի մատուցում, մտապահում և վերարտադրություն, այլև ուսուցման ակտիվ ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքների և հմտությունների ինքնուրույն ձեռքբերում: Ուսուցման ճանաչողական գործընթացը ակտիվացնելու համար կիրառվում են ուսուցման ավանդական մեթոդները՝ օգտագործելով այնպիսի հնարներ, ինչպիսիք են պրոբլեմային իրավիճակի ստեղծումը, հարցադրումը՝ ներառելով պրակտիկ վարժություններ, խնդիրներ:

Ուսուցման ակտիվ մեթոդները հիմնված են պրակտիկ գործողությունների իրականացման, խաղային գործունեության և ուսուցման ստեղծագործական բնույթի, ինտերակտիվության, հաղորդակցման, երկխոսության, ուսանողների գիտելիքների և փորձի օգտագործման, խմբային աշխատանքի, գործընթացում բոլոր զգայարանների ներգրավման, շարժման և ռեֆլեքսիայի վրա: Ուսուցման ակտիվ մեթոդի կրառմամբ ուսուցման գործընթացի արդյունավետությունը և արդյունքները պայմանավորված են նրանով, որ մեթոդների ստեղծումը հիմնվում է լուրջ հոգեբանական և մեթոդաբանական գիտելիքի վրա: Ակտիվ մեթոդները ապահովում են կրթական խնդիրների լուծումը տարբեր տեսանկյուններից.

- Ուսումնական դրական խթանի ձևավորում,
- Ուսանողների ճանաչողական ակտիվության բարձրացում.
- Կրթական գործընթացին ուսանողների ակտիվ ներգրավում.
- Ինքնագործունեության խթանում,

- Ճանաչողական գործընթացների զարգացում - խոսք, հիշողություն, մտածողություն
- Ուսումնական նյութի առավելագույն մասի արդյունավետ յուրացում,
- Ստեղծագործական մտածելակերպի զարգացում,
- Ուսանողի անհատական հաղորդակցական-զգայական ոլորտի զարգացում,
- Ուսանողի անհատական-յուրահատուկ հնարավորությունների բացահայտում և զարգացում,
- Ինքնուրույն աշխատանքի համար հմտությունների զարգացում:

Ուսուցման ակտիվ մեթոդները ապահովում են ակտիվություն, զարգացնում են մտածողությունը, հեշտացնում հիշելը, առաջացնում են հետաքրքրություն տվյալ առարկայի նկատմամբ: Արդյունքի հասնելու համար պետք է ճիշտ ընտրել ակտիվացնող մեթոդը: Դրա համար պետք է լավ ուսումնասիրել թեման, առանձնացնել դասի նպատակները՝ դրանց մեջ նշելով նաև ակնկալվող արդյունքները:

Ակտիվ մեթոդները ուսուցման գործընթացում ունեն բազմաֆունցիոնալ նշանակություն: Նրանք ապահովում են ակտիվություն, զարգացնում են մտածողությունը և ճանաչողական ակտիվությունը, հեշտացնում են հիշելը, առաջացնում են հետաքրքրություն տվյալ թեմայի և նաև տվյալ ոլորտի նկատմամբ: Արդյունքի հասնելու համար պետք է ճիշտ ընտրել մեթոդները, դրա համար պետք է լավ ուսումնասիրել թեման, առանձնացնել նպատակները՝ դրանց մեջ նշելով ակնկալվող վերջնարդյունքները:

Այսպիսով, ակտիվ ուսուցման մեթոդների կիրառում նշանակում է ուսուցում գործունեության մեջ: Լ.Ս.Վիգոտսկին ձևակերպել է օրենք, որտեղ ասվում է, որ ուսուցմանը հետևում է զարգացումը, իսկ անձը զարգանում է գործունեության մեջ:

Ուսուցման արդյունավետության բարձրացմանը նպաստում է դասերի մեջ խաղերի կամ խաղային տարրերի ներմուծումը, որը ոչ միայն ակտիվացնող միջոց է, այլև հնարավորություն է տալիս գործընթացը դարձնելու ավելի հետաքրքիր, աշակերտների մոտ ստեղծել առույգ աշխատանքային տրամադրություն ու ակտիվ մասնակցության միջավայր:

Ստեղծված առողջ հոգեբանական մթնոլորտում աշակերտն իրեն զգում է ավելի հարմարավետ ու վստահ: Խաղն ու ակտիվ մեթոդներն օգնում են աշակերտներին ներգրավվել դասին և այդ ընթացքում ինքնուրույն ձեռք են բերում գիտելիքներ, զարգացնում մտածողությունն և երևակայությունը: Սովորողները պասիվ ընկալողից վերաճում են հայտնագործողի, հետազոտողի, հետաքրքրասերի:

Եթե երեխայի գործունեության առաջնային և ցանկալի ձևը համարվում է խաղը, ապա ուսուցման կազմակերպման համար պետք է օգտագործեն գործունեության այս ձևը՝ համատեղելով խաղը և ուսումնական գործընթացը, ավելի ճիշտ, օգտագործել խաղային գործունեությունը կրթական նպատակներին հասնելու համար: Այս դեպքում խաղի մոտիվացիոն ներուժը կուղղվի ուսումնական ծրագրի ավելի արդյունավետ իրագործմանը: Բարձր դրական մոտիվացիան կարող է լրացնող գործոն հանդիսանալ սովորողների ոչ բավարար բարձր ունակությունների ժամանակ, բայց հակառակ ուղղությամբ այդ սկզբունքը չի աշխատում՝ ոչ մի կարողություն չի կարող փոխհատուցել մոտիվացիայի բացակայությունը, և ապահովել ուսուցման էական առաջընթաց: Բնական խաղային միջավայրում, որտեղ չկա պարտադրանք, և կա հնարավորություն յուրաքանչյուր երեխայի համար գտնել իր տեղը, ունենալ նախաձեռնություն և անկախություն, ազատ իրականացնելու իրենց կարողությունները և կրթական կարիքները, հանդիսանում է ուսումնական նպատակներին հասնելու օպտիմալ տարբերակ:

Կրթական գործընթացում ուսուցման ակտիվ մեթոդների ներառումը թույլ է տալիս ստեղծել այդպիսի միջավայր՝ ինչպես դասարանում, այնպես էլ արտադպրոցական միջոցառումների ժամանակ:

Հաճախ ենք հանդիպում այն մտքին, թե ուսուցումը պետք է ունենա ստեղծագործական ուղղվածություն, որը կազմում է այն միջոցների, հնարների, մեթոդների հիմքը, որոնց կիրառմամբ պայմանավորված է ուսումնական գործընթացի բոլոր գործառույթները: Սովորողը գիտելիք է ստանում ոչ միայն ուսուցչից, այլ՝ ընկերոջից, սովորում է սովորել ինքնուրույն:

Իմ աշխատանքային գործունեության ընթացքում կիրառելով ակտիվ մեթդներ դիտարկել եմ դրանց որոշակի առավելությունները.

- Գործընթացի մեջ բոլոր սովորողների ներգրավվածություն

- Հավասարություն / օրենքը բոլորի համար է. խաղի կանոններին հետևում են բոլորը/:
- Քննադատություն չկա, կան դիտարկումներ և լրացումներ
- Ակտիվ են համագործակցության մեջ
- Ազատ, անկաշկանդ օգտագործում են տեխնիկական ուսուցման միջոցներ, զննական պարագաներ:

Այս ողջ գործընթացը ապահովելու համար կարևոր է կարգապահությունը, այն պետք է կարևոր դարձնել նաև աշակերտների համար: Հետևելով ամբողջի վերլուծությանը դասարանում մշակել ենք կանոնակարգ, որը ենթադրում է վեց կարևոր կանոն-կարգ

- Ուսուցչին դիմել «Դուք»-ով
- Լսել դիմացինին
- Խոսել միայն ձեռքով
- Դասերին ներկայանալ առանց ուշացման
- Խնամքով վերաբերվել գրքերին և գույքին
- Հարգել և օգնել ընկերոջը

Պարբերաբար անդրադառնալով «կանոնակարգի» դրույթներին, դասարանում ձևավորվել է խաղաղ, հաճելի միջավայր, դասապրոցեսը անցնում է հետաքրքիր և համակարգված:

Կիրառված յուրաքանչյուր միջոց կամ մեթոդ պետք է ծառայի իր նպատակին, որն էլ հնարավորություն կտա գիտակցորեն մասնակցել դասին:

Արդեն նշեցինք, որ դասի արդյունավետությունը բարձրացնելու, դասը հետաքրքիր, հեշտ ու հաճելի դարձնելու համար ուսուցիչը պետք է կիրառի տարբեր խաղեր, հնարներ և մեթոդներ:
,, Պատմել,, , ,, Զրույց,, , ,, Հարց ու պատասխան,, , ,, Ուսումնական բանավեճ,, մեթոդները կիրառելի են հատկապես տարրական դասարաններում: Դրանք հնարավորություն են տալիս երեխաներին արտահայտվելու, հարցապնդումներ անելու, չիմասածն ու չհասկացածը կրկին ու կրկին հարցնելու, ճշմարտությունն իհայտ բերելու: Հենց այդ ժամանակ են երեխաները արժևորում, գնահատում և իրենց, և ընկերների գիտելիքները, կարողություններն ու հմտությունների չափը, զարգացման աստիճանը:

Իմ աշխատանքի մեջ կարևորում եմ խոսքային մեթոդները: Խոսքը ակտիվացնում է սովորողի երևակայությունը, հիշողությունը, զգացմունքները

Մեթոդները բաղկացած են հնարներից և վարժություններից:

Դիտարկենք մի քանի մեթոդներ, որոնք կիրառելի են տարբեր դասապրոցեսների մեջ:

Զրույց

Զրույցը այնպիսի մեթոդ է, որն ունի երկխոսության բնույթ: Զրույցի միջոցով ուսուցիչը աշակերտների ընկալմանն է հասցնում նոր նյութի բովանդակությունը:

Զրույցի ձևերից են

- Անհատական զրույց
- Խմբային զրույց
- Ֆրոնտալ զրույց

Անհատական զրույցի դեպքում հարցերն ուղղվում են մեկ աշակերտի: Երկրորդի դեպքում հարցերը ուղղվում են որևէ խմբի, իսկ ֆրոնտալ զրույցների ժամանակ հարց ու պատասխանին մասնակցում են բոլորը: Զրույցը կրճատում է ուսուցիչ աշակերտ հեռավորությունը: Զրույց մեթոդով ուսուցչի կողմից նախապես կազմված հարցերի օգնությամբ աշակերտներն ինքնուրույն են վերլուծում երևույթները, փաստերը, հայտնում իրենց տեսակետն ու վերաբերմունքը, նաև ձևակերպում եզրակացություններ: Զրույց մեթոդը ունի մի շարք առավելություններ

- Զարգացնում է սովորողների մտածողությունը
- Ակտիվացնում է սովորողների հետաքրքրությունները
- Զարգացնում է նրանց խոսքի մշակույթը
- Ունի դաստիարակչական նշանակություն

Ակտիվ դասի օրինակ

Առարկան- Մայրենի

Ուսուցիչ՝ Լամարա Ալեքսանյան

Թեմա	«Ու հնչյուն- տառի ուսուցում»

Նպատակ	Ուսուցանել Ու հնչյուն- տառը, կարդալ և գրել, Ճանաչել այն բառասկզբում, բառամիջում և բառավերջում:

Վերջնարդյունք	Դասի ավարտին աշակերտները ● Կկարողանան ճանաչել Ու տառը ● Կազմել Ու-ով սկսվուղ և Ու պարունակող բառեր, ճիշտ գրել Ու տառը առանձին և բառի մեջ ● Կարդալ Ու ունեցող բառեր, բառակապակցություններ և նախադասություն
Բանալի բառեր	Ծանոթանան նոր բառերի և հասկանան դրանց իմաստը,նշանակությունը, կիրառությունը՝ մեղվապահ, փեթակ, ուղղաթիռ, ուրագ
Մեթոդներ, հնարներ, խաղեր	Զրույց, մտագրոհ
Ուսումնական միջոցներ	Դասագիրք, աշխատանքային տետր, գրատախտակ, համակարգիչ, գունավոր մատիտներ, ավազե տախտակ, Ու-ի մեծադիր նկարը
Դասի տիպը	Նոր նյութի հաղորդման դաս
Դասի ընթացքը	Տնային առաջադրանքների ստուգում, դասահարցում Նոր նյութի մատուցում Վերհիշել սովորած տառերի երկտողները Վարել <<Զրույց>> թեմատիկ նկարի շուրջ

	Աշակերտների մասնակցությունը ակտիվացնելու համար անել հարցադրումներ Ի՞նչ եք տեսնում վերևում Երեխաներ-սավառնում է ուղղաթիռը, լողում են սպիտակ ամպեր, թռչում են թռչուններ Ի՞նչ կա ներքևում Երեխաներ- հոսում է փոքրիկ առու, բզզում են մեղուները, մեղվապահը ուրագով փայտ է տաշում, որ մեղուների համար փեթակ պատրաստի Բնակպատկերը վերլուծելուց հետո ուշադրություն են դարձնում Ու հնչյունի գրաֆիկական պատկերի վրա, ուղտի և ուրագի տեսքով նկարված Ու-ի վրա, միասին սովորում են Ու-ի երկտողը: *Ուրագն եմ ես թե տաշեմ* *Փայտը արագ կմաշեմ* Միասին վերհիշել, որ հնչյունը արտասանում և լսում ենք, իսկ տառը գրում և կարդում ենք Պարզում են, որ Ու-ն Ա-ի և Ի-ի նման երգեցիկ է, ուրեմն ձայնավոր է, ուղտը միավանկ է, իսկ ուրագը երկվանկ Կարդալ բառաշարերը՝ ուս, սուս, Սուսան պարզում են, որ նախորդ բառը կա հաջորդում Հարցնել, թե ինչու է Սուսանը մեխատառով, իսկ ուս-ն ու սուս-ը փոքրքտքառով, որովհետև Սուսանը անուն է, իսկ բոլոր անունները գրվում են մեծատառով Վերլուծելով կարդալ մյուս բառաշարերը Ուշադրություն դարձնել Սիրուն Արուս, Սուր կարկին, Սարի սունկ շարքին, դրանց ընթերցմանը, ասել որ սրանք բառակապակցություններ են, որոնց կարելի է գործածել նախադասության մեջ: Օրինակ՝ Սիրուն Արուսը լավ է սովորում: Արան սուր կարկի ունի և այլն: Երեխաները ինքնուրույն կարդում են բու, ուլ, ձու բառերը

	Անին սիրուն մատիտ ու կարկին ունի նախադասության ընթացքում ուսուցիչը հիշեցնում է նախադասության ուղղագրությունը՝ նախադասությունը սկսվում է մեծատառով, նախադասության վերջում դրվում է վերջակետ: Դասի վերջում երեխաները ավազե տախտակների վրա փորձում են գրել Ու տառը:

ԴԱՍԻ ՊԼԱՆ

Դասարան-1-ին

Առարկան- Երգ-երաժշտություն

Թեման – Աշնան երգ

Նպատակը՝

- Զարգացնել ճիշտ երգելու, խմբային երգեցողության ժամանակ լսելու, ձայնը խմբին հարմարեցնելու կարողություններ

- Երաժշտության և երգի միջոցով հաղորդակցվելու, հույզեր և զգացմունքներ արտահայտելու, բնության հետ կապը զգալու կարողությունների ձևավորում

Վերջանդյունքներ՝

- Ճիշտ և հուզական երգի սովորած երգը
- Կատարումների, ունկնդրման, խաղերի և գունապատկերման միջոցով ճանաչի և տարանջատի երը, պարը, քայլերգը
- Արտահայտի իր իմացությունները երգի, պարի, քայլերգի, եղինակի՝ կոմպոզիտոր, բանաստեղծ, կատարող և ունկնդիր հասկացությունների մասին
- Երգը համեմատի բնության մեջ կատարվող փոփոխությունների հետ

Բանալի հասկացություններ – Անձրևել, որոտալ, արտասվել և տերևների պարահանդես

Ընտրված մեթոդներ, հնարներ, խաղեր- Զրույց, խաղ

Ցուցադրման ենթակա նյութեր – Աշնան տեսարանի նկար, անձրևոց, գունավորնթղթերից կտրատված տերևներ, մրգեր

Գնահատման տեսակը – ձևավորող

Դասի ընթացքը – միասին վերհիշել նախորդ երգը, երգել ամբողջ դասարանով, փոքր խմբերով, կամ զույգերով

Նոր երգի ուսուցումից առաջ զրուցել աշնան մասին, տալ բնութագրող նկարագրություն

Լսել երգը ուսուցչի կատարմամբ, կիսվել տպավորություններով, ապա տոզ առ տող կրկնելով ուսուցչին՝ սովորել: Սովորել և երգել առաջին տունը և կրկներգը:

Առաջին տունը սովորելուց հետո կազմակերպել խաղ- անձրև

Ուսուցիչ- Անձրև է կաթում

Երեխաները մատներով ճտճտացնում ե, բոլորն ակտիվանում են:

Ուսուցիչ – անձրևը կամաց-կամաց ուժեղանում է

Երեխաները ձեռքերի ափերով թփթփացնում են կրծքավանդակին: Առաջանում է հաճելի աղմուկ:

Ուսուցիչ- ամպը որոտաց

Երեխաները մեկ անգամ ցատկում են տեղում որոտի տպավորություն առաջացնելով, տիրում է լռություն:

Ուսուցիչ – Անձրևը վարարեց

Երեխաները ձեռքերով խփում են ազդրերին

Ուսուցիչ- անձրևը կամաց-կամաց թուլանում է

Երեխաները ճտճտացնում են մատներով

Ուսուցիչ- անձրևը դադարեց

Երեխաները բարձր տրամադրությամբ անցնում են երկրորդ տան ուսուցմանը, ուսուցչի հետ միասին երգում են ամբողջ երգը:

Տանը հանձնարարել A4 չափի թղթի վրա նկարել աշուն:

Դասի պլան

Դասարան- առաջին

Առարկա- մաթեմատիկա

Թեմա- 9 թվի գրությունը թվանշանով

Նպատակը

- Ծանոթացում 9 թվի և թվանշանի հետ
- 9 թվի գրության և կազմության ուսուցում
- Առարկաները հաշվելու, համարակարելու հմտության ձևավորում
- Միանիշ թվերի հետ գործողություններ կատարելու կարողությունների ձևավորում

Վերջնարդյունքները

- Ճանաչի , կարդա և գրի 9 թիվը
- Իմանա 9-ի կազմությունը

- Հաշվի և համարակալի առարկաները
- Ճանաչի 1-9 թվերի նախպորդ և հաջորդ թվերը
- Կատարի 1-9 թվերի սահմանում, գումարում, հանում և համեմատում

Կարևոր դրույթներ – օրինաչափություն, կառուցվածք

Բանալի հասկացություններ – նախորդ, հաջորդ, ավել է այսքանով, պակաս է այսքանով

Ընտրված մեթոդներ, խաղեր, հնարներ – հարց ու պատասխան, խաղ

Դասի նախապատրաստում – գիրք, տետր, գրիչ, հաշվեձողիկներ, թվերի կազմության պաստառ 9-ի մեծ նկարէ երկտողով, ավազե տախտակներ

Ինչ կարողունակություններ են ձևավորվելու – լեզվական կարողունակություններն և գրագիտություն, մաթեմատիկական կարողունակություններ:

Գնահատում- ձևավորող գնահատում

Դասի ընթացքը – վերհիշել մի քանի թվերի երկտողեր, դասավորել թվերը աճման և նվազման կարգով, ասել տրված թվի նախորդ և հաջորդ թիվը:

Լսել 9-ի երկտողը և կրկնելով սովորել այն, 9-ի նկարը փակցնել թվերի շարքում պարզելով, որ 9-ը 8-ի հաջորդ թիվն է և որ այն մեր սովորած թվերից ամենամեծն է

Ավազե տախտակների վրա գրել 9-ը թվի թվանշանը, սովորել 9-ի գրելաձևը

Կատարել դասագրքի առաջին առաջադրանքը՝գրել 1-9 թվերի թվանշանները

Կազմակերպել խաղ մոլորված թվերը ,երեխաների առաջին խումբը թվերը դասավորում են աճման կարգով, երկրորդ խումբը՝ նվազման կարգով: Խրախուսել ճիշտ և արագ աշխատող խմբին, պարզել սխալկամ դանդաղող խմբի խնդիրները, քննարկել և վերլուծել

Կատարել առաջադրանք 2-ը՝ գումարում հանում 9-ի սահմանում՝ օգտվելով թվերի կազմության պաստառից

Տնային առաջադրանք 3-ը:

Վերլուծություն

Ակտիվ մեթոդներն ու հնարները աշակերտներիս հնարավորություն են տալիս արտահայտվելու, որոշելու, իրենց տեսակետը առաջ մղելու, կարծիքներ լսելու, վերաբերմունք փոխելու, ազատ և անկաշկանդ գործելու:

Ակտիվ մեթոդների, հնարների, խաղերի հաճախակի և տեղին կիրառումը իմ դասապրոցեսներին ավել ու ավելի շոշոփելի ու տեսանելի են դարձնում իմ դասի արդյունավետությունը: Դրանց կիրառությունները ինձ հնարավորություն են տալիս բացահայտելու աշակերտներիս հնարավորություններն ու կարողությունները, ավելի խորքային ճանաչելու նրանց, իմանալու նախասիրությունները, հայտանաբերելու ուժեղ և թույլ կողմերը, որից փոխվում են ուսուցման, դասավանդելու, դասանյութը մատուցելու միջոցները և ձևերը:

Ակտիվ մեթոդները դարձել են իմ աշխատանքի ամենապահանջված գործիքները, իսկ դրանց կիրառությունը դասերիս ապարդյունավետության խթանիչները:

Եզրակացություն

Այսպիսով, ուսուցչի մասնագիտական, առարկայական գիտելիքների կարողությունների մասն են կազմում մեթոդների իմացությունը, դրանք կիրառելու, համադրելու հմտությունը, որոնք ուսուցման գործընթացի արդյունավետությունն ու ներգրավվածությունն ապահովող կարևոր ուղիներից են, ակտիվ ուսուցման մեթոդները ենթադրում են օգտագործել այնպիսի մեթոդների համակարգ, որոնց ժամանակ ուսուցիչը չի մատուցում պատրաստի գիտելիքներ, այլ աշակերտները գիտելիքներ են ձեռք բերում ինքնուրույն ակտիվ ճանաչողական գործունեության ընթացքում:

Նոր կրթական ռազմավարությունը ենթադրում է նոր միջոցների և նոր մեթոդների կիրառություն:

Այսօր առավել քան երբևէ դասարանում դասավանդողի առջև դրված է մեկ հիմնական խնդիր՝ առաջնորդել սովորողներին, մղել սովորելու, փնտրել գտնելու, ցույց տալ ճանապարհներ, ձևավորել գիտելիքն ու հմտությունները օգտագործելու, կիրառելու կարողություն և ոգևորել:

Այսօր չկա այնպիսի ուսուցիչ ով չմտածի հետևյալ հարցերի մասին.

- Ինչպե՞ս առարկան, դասը դարձնել հետաքրքիր
- Ինչպե՞ս գրավել սովորողների ուշադրությունը
- Ինչպե՞ս ստեղծել հաջողության իրավիճակ դասարանում բոլորի և յուրաքանչյուրի համար, որպեսզի նրանք դասին կամավոր և ստեղծագործ աշխատեն:

Դասի ներդաշնակությունը պայմանավորված է ոչ միայն ուսուցչի՝ դասին լավ պատրաստված լինելով, այլև սովորողների՝ ուսման հանդեպ ունեցած մոտիվացմամբ: Իսկ երեխային հետաքրքրելու ու նրան ակտիվ ուսումնառության մեջ ներգրավելու լավագույն միջոցը սովորողների հետաքրքրությունից և նախասիրությունից բխող ուսումնական պրոցեսի կազմակերպումն է:

Ակտիվ մեթոդների կիրառման ժամանակ բոլոր աշակերտները մասնակցում են դասին,միևնույն ժամանակ դրանք հնարավորություն են տալիս բացահայտելու յուրաքանչյուրի գիտելիքներն ու իրական կարողությունները: Սակայն ուսուցիչը ևս պետք է ցույց տա իր հմտությունը. նա պիտի իմանա յուրաքանչյուր երեխայի առանձնահատկությունները և կիրառի տարբերակված ուսուցում: Հաջողության հասնելով՝ աշակերտը դառնում է ավելի վստահ, մեծանում է ավելին իմանալու և դասին ակտիվորեն մասնակցելու ցանկությունը:

Մեթոդները բազմազան են, սակայն ընտրությունը պետք է լինի զգուշավոր,որպեսզի հակառակ արդյունքը չլինի:

Առաջարկություն

Առաջարկում եմ ուսումնական գործընթացում տեղին և հաճախակի կիրառել ակտիվ մեթոդներ, խաղեր, հնարներ, հետևել կրթական ոլորտ ներմուծվող փոփոխություններին և լավագույն նորարարությունները տեղափոխել դասարան, աշխատել ձևավորող գնահատման շեշտադրմամբ, բացահայտել աշակերտների ուժեղ կողմերը, նրանց հմտությունները: Այդժամ ուսումնառության պրոցեսը կդառնա ոչ միայն հաճելի, այլև դյուրին և արդյունավետ:

Գրականության ցանկ

1. Ամիրջանյան Յ.Ա., Սահակյան Ա.Ս., Մանկավարժություն, Երևան 2005, 456 էջ;
2. Ավետիսյան Գայանե, «Մայրենիի ուսուցման ժամանակակից մեթոդների արդյունավետությանը միտված հարցեր», ‹‹Մխիթար Գոշ››. Գիտամեթոդական հոդվածներ, 1.2019, էջ 76-81;
3. Սարուխանյան Ս., Դալլաքյան Ա., Դիշաղաջյան Ն., «Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ», Վանաձոր 2008թ, 101 էջ;
4. Пиаже Ж. «Речь и мышление ребенка». — 1994
5. https://4melblog.wordpress.com/
6. https://www.slideshare.net/torosian/ss-9876301
7. https://forum.armedu.am/forum